տութիւններից յետոյ, եւ այդ աւելի ոգեւորում էր նրան, աւելի ուժ եւ կեանք էր տալիս նրա ձանին:

Ես առաջին անգամ տեսնում էի մի այդպիսի ուրախ հասարակութիւն: Ինձ թւում էր, որ սպանիչ հոգսը, վիշտը, տառապանքը, որ այդ կողմերում ամէն մի գիւղացու ճակատագիրն էր, երբեք այդ գիւղին չէր մօտեցել: Ինչո՞վ ձեռք բերեցին նրանք այդ ուրախութիւնը: Ինչո՞վ հեռացրին իրանցից աւանդական լացը, կոծը ու արտասուքը: Ես այդ քննութիւնների մէջ չէի մտնում. ես մխիթարւում էի միայն, որ ամէն տեղ միշտ թշուառութիւններ տեսնելուց յետոյ վերջապէս տեսնում էի մարդիկ, որ աշխատում են, գործում են եւ իրանց աշխատութեան արդիւնքը ամենայն բաւականութեամբ վայելում են: Անգութ հարկահանը ծախել չէր տալիս նրա արօրի եզները, իսկ քուրդ ելուզակը չէր յափշտակում նրա անասունների հօտերը:

Ռեսը եւ նրա մօտ նստողները, որ մինչեւ այժմ նկատողութիւններ էին անում անասունների վրայ, այժմ սկսեցին նկատողութիւններ անել դաշտից վերադարձող մշակների վրայ:

— Այդ Հակօի տղան, ասում են, գժութիւններ շատ է անում, նրա ականջները պէտք է փոքր-ինչ ոլորել, — ասաց ռեսը, ցոյց տալով մի սրիկայադէմ պատանի, որը, իր գլխի քոլոզի վրայ փաթաթած գոյնզգոյն թաշկինակների մէջ զանազան ծաղիկներ խրած, մեր մօտից հպարտութեամբ անցնում էր:

— Մեզանից ո՞ր մէկը նրա հասակում գժութիւններ չէ արել, — ներողամտութեամբ պատասխանեց քահանան: — Դեռ ջահիլ է, արիւնը նոր է եփ գալիս, կը մեծանայ, խելքը գլուխը կը գայ:

— Այդ Վանեսի տղան, ասում են, գործի չէ գնում. այս առաւօտ հայրը զօռով է դաշտը ուղարկել, — դարձեալ նկատեց ռեսը:

— Նա փոքր-ինչ ծոյլ է, — վկայեցին ամէնքը:

— Նա գոնէ թող օրինակ առնէ Մաթոսի տղայից, որ տասն հոգու հաւասար է. մի օրոայ մէջ, որքան ասէք, հնձում է: Նայեցէք, ամբողջ օրը աշխատել է, հիմա մի մեծ շալակ խոտ է բերում հորթերի համար:

— Թող աստծոյ աչքը վրան լինի, շատ աշխատասէր տղայ է, — ձայն տոեցին ամէնքը:

Այսպէս, մէկի արժանաւորութիւնները գովելով, միւսի թերութիւնները պախարակելով, բարոյականութեան այդ վերահսկողները իրանց կարծիքը յայտնում էին իւրաքանչիւրի մասին: Ի հարկէ, միւս օրը նրանք կը լսէին, լաւերը աւելի կը խրախուսուէին, իսկ վատերը կուղղէին իրանց վարքը: Յար-